ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13» մարտի 2019 թվականի N:25 ք.Գյումրի

«ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 67-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2019 թվականի մարտի 11-ի N 01/16/01526-2019 գրությունը, մրցույթի մասնակիցներ Սուսան Պետրոսյանի և Վռամ Մելիքյանի 2019 թվականի մարտի 6-ի դիմումները.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի մարտի 6-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակիցներ Սուսան Պետրոսյանի և Վռամ Մելիքյանի բողոքը քննարկող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի
2019 թվականի մարտի 13 -ի N 25 կարգադրության

ԿԱԶՄ
«ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կարեն Բադիշյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ,
Լիլիթ Գորգինյան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,
Իրինա Ներսիսյան	- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի առողջապահության գլխավոր կազմակերպիչ,
Մերի Կատվալյան	- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության բարեվարքության հարցերով կազմակերպչի պաշտոնակատար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է